Առաջադրանք 3

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքը:

Մրջյուն

Մրջյունը աշխարհի ամենափոքր, բայց ամենից ուժեղն միջատն է: Նա հանգիստ կարող է իրենից քսանհինգ անգամ մեծ բեռ շալակել և տանել մի տեղից մյուսը:

Մրջյունը շատ աշխատասեր է՝ իր համար տուն է կառուցում, խնամում երեխաներին, ձմռան համար կերակուր պատրաստում, գնում կռվելու:

Մրջյունները ընտանիքում հրաշալի կանոններ ունեն: Նրանք իրար մեջ բաժանում են գործը և կատարում: Նրանց մի մասը բանվոր է, մի մասը՝ զինվոր, որսորդ, ստրուկ:

Յուրաքանչյուր բնում կա մի գլխավոր մայր մրջյուն, որին մարդիկ «թագուհի» են կոչում:

Թագուհին միշտ բնում է, երբեք չի աշխատում, իսկ նրան խնամում են ընտանիքի մյուս անդամները:

Սնունդը բանվոր մրջյուններն են բերում: Նրանք անցնում են սար ու դաշտ, որ գտնեն և տուն բերեն հացի փշուրներ և շաքարի հատիկներ, բույսերի սերմեր, բույն կառուցելու համար նյութ:

Իսկ զինվոր մրջյունները կռվում են օտար մրջյունների դեմ: Նրանք թշնամու ձվերն իրենց բույն են բերում, իսկ դրանցից դուրս եկած մրջյուններին դարձնում են ստրուկներ:

Մրջյունները միշտ նեղության պահին հավատարիմ կերպով օգնում են իրար: Եթե ճանապարհին «խոր ձոր» է հանդիպում, առանց վախի բռնվում են իրարից, կենդանի կամուրջ են կապում մի ծայրից մյուսը և այդ կամրջով անցկացնում ամբողջ իրենց «բանակը» Որոշ մրջյուններ կարող են իրենց զոհաբերել ընկերներին փրկելու համար:

Առաջադրանք

1. Տեքստից դո՛ւրս գրիր մի նախադասություն, որտեղից երևում է, որ մրջյունը աշխատասեր է:

Պատասխան՝

Մրջյունը շատ աշխատասեր է՝ իր համար տուն է կառուցում, խնամում երեխաներին, ձմռան համար կերակուր պատրաստում, գնում կռվելու:

2. Տեքստից դո՛ւրս գրիր մի օրինակ, որտեղ երևում է, որ թագուհի մրջյունը ոչինչ չի անում:

Պատասխան՝

Թագուհին միշտ բնում է, երբեք չի աշխատում, իսկ նրան խնամում են ընտանիքի մյուս անդամները:

3. Ի՞նչ են անում բանվոր մրջյունները:

Պատասխան՝

Մնունդը բանվոր մրջյուններն են բերում: Նրանք անցնում են սար ու դաշտ, որ գտնեն և տուն բերեն հացի փշուրներ և շաքարի հատիկներ, բույսերի սերմեր, բույն կառուցելու համար նյութ:

4. Ընդգծի՛ր սխալ պատասխանը.

   - *Մրջյունը աշխարհի ամենափոքր և ամենից թույլ միջատն է: +*
   - Մրջյունը աշխարհի ամենափոքր, բայց ամենից ուժեղն միջատն է:

5. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը.

- զինվոր մրջյունները կռվում են օտար մրջյունների դեմ և կոտորում են նրանց բոլոր ձվերը,
- մրջյունները չեն կռվում օտար մրջյունների դեմ,
- մրջյունները բոլորը միասին են, նրանց մեջ օտարներ չկան,

- *զինվոր մրջյունները թշնամու ձվերն իրենց բույն են բերում, իսկ դրանցից դուրս եկած մրջյուններին դարձնում են ստրուկներ։ +*

6. Գրի՛ր՝ ի՞նչ նոր բան իմացար մրջյունների մասին։

Պատասխանը քո տարբերակն է։

7. Տեքստից դո՛ւրս գրիր հոգնակի թվով գործածված 4 բառ։

Պատասխան՝ (կարող են լինել այս տարբերակներից)

մրջյուններ
կանոններ
մարդիկ
սերմեր
փշուրներ
հատիկներ
ձվեր
ստրուկներ
ընկերներ

8. Գրի՛ր տեքստում գործողություն ցույց տվող 2 բառ։

Պատասխան՝ (կարող են լինել այս տարբերակներից)

շալակել
տանել
կառուցել
խնամել
պատրաստել
կռվել
բաժանել
կատարել
բերել
անցնել
կառուցել
դարձնել
օգնել
հանդիպել
բռնվել
կապել
զոհաբերել

փրկել

9. Մրջյունները ինչպիսի՞ն են: Տեքստից դո՛ւրս գրիր երկու բառ:

   Պատասխան՝ (կարող են լինել այս տարբերակներից)

   ամենափոքր
   ուժեղ
   աշխատասեր

10. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: «Կամուրջ», «բույն » բառերը ցույց են տալիս
    - *առարկա,*
    - թիվ,
    - հատկանիշ,
    - գործողություն: